







ԲՆԻՆՈՒՄԻՆ ԹՐԴԱԿԼՈՒՄՑ.





7

8

6

ԿԱՐՁԵԱԼ ՄԵ ՆՈՐ ԳԻՒՏ ԲԵՒԵՌԱԳՐՈՅ.

Այս Հոկտեմբեր ամսին պաշտօնական գործով պատահելով Ծաղկա-
ձորոյ (Դարաշիշակ) գաւառակի Օրդակլու (ի հնումն Պորտակ) ա-
նունով Հայարնակ գիւղն՝ տեղւոյն Արժ Գրիգոր Քահանայի և Շնորհ-
լաւ երաժիշտ (հին եղանակովն) դպիր Պարապետի օժանդակութեամբն
ամենահին բերդի աւերակաց մէջ և ծովեղերեայ քարափանց վերայ ո-
րոնելով՝ կարողացանք գտնել գիւղի հիւսիսային ծայրին՝ Սեանայ ծո-
փի արեւմտեան եղերքումն՝ ինն տող փոքրատառ բնագրովք արձա-
նագիր անտաշ ապառաժ քարի վերայ, որոյ օրինակն ահա՛ գրու-
թեանս հետ տամ խմբագրութեանդ ի տպագրութիւն՝ հնախուցից իւ-
րեւնոր նիւթ մատակարարելով:

Ինչպէս լայնատարած ամենահին շինուածոց հետքերն ցոյց են տալի
Արարատեան նահանգի զանազան կողմերում, դեռ շատ բնագիր
արձանագրութիւնք կան անյայտութեան մէջ, զօ. Սեանայ ծովի հա-
րաւային եղերքը ծայրէ ի ծայր՝ սկսած Օրդակլու գիւղից ցԶաղալու
գիւղն, յորս արձանագրութիւնքն գտնված են. նոյնպէս և Մասիս լե-
րան հիւսիսային ստորոտումն եղած ընդարձակ աւերակների մէջ՝ սկսած
Փառախոտից (այժմ՝ Արհաջ թուրքի գիւղ) մինչև Յօլակերտ (Տաշբու-
ռուն Հայի գիւղ), որոց միջոցումն է հին քաղաքատեղին Արշակա-
ւան (Խարաբայ - Բաղար և Վ. օրդան). մանաւանդ յուսալի է այլ ևս
շատ այնպիսի արձանագրեր գտնել Արմաւրի շրջակայքումն. նոյնպէս
և Նախիջևանայ գաւառի հին հին բերդերի և քաղաքների աւերակների
մէջ, Բայց այս ամենը գտնելու համար պէտք է եռանդով հետախու-
զութիւն:

Եւելլում թէ՛ այս արձանագրոյ օրինակն արդէն ուղարկել եմ Մե-
ծապատիւ Հայազգի հնագէտ Պ. Քերովրէ Պատկանեանին թարգմա-
նութեան համար, որ եթէ բարեհաճէ թարգմանութիւնն ուղարկել
ինձ, կտամ խմբագրութեանդ ի տպագրութիւն:

Որոնոց Ազգային Հնութեանց

ՄԵՍՐՈՎԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԻՆՏԵԱՆՑ.

30 Հոկտմ. 1883.